



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1

☎/0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019թ.

Tert.am լրատվական կայքի
լրագրող Անի Օհանյանին

Ի պատասխան Ձեր 11.03.2019թ.-ի Մ-04891-2019 գրության.

Տեղեկացնում եմ, որ 2018թ.-ի դեկտեմբերի 22-ին Վանաձորում կայացել է հայ-իրանական «Ռադ Սանե Վաշամիր Գրուպ» ՍՊԸ կողմից հիմնադրված կոմպոզիտային գազաբալոնների արտադրամասի բացման արարողությունը, որին մասնակցել է նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Բացման արարողությունից մինչ այժմ արտադրամասում իրականացվել են վերանորոգման, սարքավորումներով համալրման աշխատանքներ, ինչպես նաև հայտարարված թափուր աշխատատեղերի մրցույթի արդյունքում մեկնարկել են աշխատակիցների ընտրման աշխատանքները: Ընտրված անձանցից կազմված երկու խմբերն արդեն իսկ վերապատրաստում են անցել Իրանի Իսլամական Հանրապետությունում:

Այս փուլում կնքվել են պայմանագրեր օտարերկրյա մի քանի կառույցների հետ: Իրանից ներկրվող հումքը ապրիլի սկզբին Հայաստան հասնելուց անմիջապես հետո գործարանը կսկսի աշխատանքների մեկնարկը:

Առավել մանրամասն ու ընդգրկուն տեղեկատվություն ստանալու համար կարող եք կապ հաստատել ընկերության համահիմնադիր Արայիկ Ասրյանի հետ (+374)77245115 հեռախոսահամարով:

 Invalid signature

X 

ԱՆԴԻԵՑ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ